ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<09>> դեկտեմբերի 2013 թվական N:145 ք.Գյումրի

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի N176-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի՝ քանդման ենթակա N5 վթարային շենքի բնակիչների վերաբնակեցման՝ անվտանգության ապահովման, ինչպես նաև Մարալիկ քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրները լուծելու մասին>> N 1260-Ա որոշման 4-րդ և 5-րդ կետերի դրույթներով.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքում կառուցված NN 17,22,28,35 բազմաբնակարան շենքերի բնակարանների բաշխումն իրականացնելու նպատակով ստեղծել բնակարանների բաշխման հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝

   1) Երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1260-Ա որոշման 4-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված անձանց փաստաթղթային փաթեթների ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմել և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի հաստատմանը ներկայացնել Մարալիկ քաղաքի NN 17, 22, 28 և 35 շենքերից բնակարան ստացող ընտանիքների ցուցակը,

   2) Մարալիկ քաղաքի NN 17, 22, 28 և 35 շենքերի շինարարական աշխատանքների ավարտման փաստագրումից հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին ներկայացնել նշված շենքերից բնակարան ստացող անձանց հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության անունից կնքվելիք համապատասխան պայմանագրերը:

3. Սույն կարգադրության հսկողությունն իրականացնում եմ անձամբ :

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված

ՀՀ Շիրակի մարզպետի

2013 թվականի դեկտեմբեր «09»-ի N 145

կարգադրության

ԿԱԶՄ

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Պետրոսյան Սեյրան	-ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ, նախագահ,
Մարգարյան Ալբերտ	-ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ, տեղակալ,
Գևորգյան Արտակ	-Մարալիկի քաղաքապետ, անդամ (համաձայնությամբ),
Հարությունյան Տիգրան	-ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ, անդամ,
Ղարիբյան Տիգրան	-ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ, անդամ,
Գրիգորյան Սամվել	-ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ, անդամ,
Եփրեմյան Վարազդատ	-ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի առաջատար մասնագետ, անդամ,
Հախվերդյան Աշոտ	-ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի գլխավոր մասնագետ, քարտուղար:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԻՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Խ.ՊՈՂՈՍՅԱՆ